

Մին ժամ արեգակն լուսի պէս եւ դու:
Զօր ու զիշեր միշտ տանջում ես, քուն
[չունես,
ի՞նչ անեմ, որ յաւիտենից տուն չունես.
Տէր Եսայի յետիւժ բաժինն ի՞նչ ունես,
Շաղաղած աշխարհիս մեղքի հետ ես
[դու»:

Թէ Տէր-Եսային, որպէս երգիչ-տաղա-
բան, հասարակական ի՞նչ գործունէու-
թիւն է ունեցել եւ իր քնարի լարերի վրայ
ի՞նչպիսի բովանդակութեամբ երգեր է
հնչեցրել, փաստական տւեալներ, դրժ-
բախտաբար, չկան. այդ էական հարցերը
հնարաւոր կը լինի լուսաբանել, երբ փո-
շինների տակ մնացած տաղարաններից մի
գեղեցիկ օր երեւան կը գան երգչի միւս
անտիպ տաղերը:

Բացի ընդդէմ աշուղներից, մեր դը-
րական արխիւում գտնւած 1870 թւակա-
նի ձեռագիր մատենանում կան մի շարք
անյայտ երգիչներ - Տէր Եսայի, Սէփան
օղլի զուլ Ղազար, զուլ Սարգիս Շրիշկան-
ցի եւ ուրիշներ, որոնք նոյնպէս կարօտ են
ուսումնասիրութեան: Յարմար առիթով
այդ աշուղների կերպարները եւս կը պատ-
կերենք եւ նրանց ստեղծագործութիւննե-
րը կը վերլուծենք: Դա անհրաժեշտ է մա-
նաւանդ այն առնչակէտից, որ միայն նման
աշխատանքով հնարաւոր է գրել աշուղա-
կան գրականութեան լրիւ պատմութիւնը:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

29 Օգոստոս 1957

Ռաշտ

ԵԱԳՈՒՊԻ ԱՐԱՐ ՊԱՏՄԱԳԻՐԸ

եի

ՀԱՅԵՐԸ

(Շար. տե՛ս Բազմ. 1957, թ. 11-12, էջ 262)

25.

Ապտմէլիֆ Խան Ճահիաֆ Աս Սուլամի
կը բռնանայ Հայաստանի

198ին (813) Ալ-Մամուն զրկեց Ալ-Հա-
սան Իպն Սահլ դէպի Իրաք եւ ուրիշ տե-
ղեր՝ կառավարիչի հանգամանքով: Արդէն
Ալ-Մաֆար՝ որ ծանօթ էր Ապուս-Սարա-
յիս անունով, իսկ բուն անունն էր Աս-
Սարի Իպն Մանսուր Ալ-Շայպանի, ապրս-
տամբած էր Քուֆայի մէջ՝ հետն ունենա-
լով Մոհամմէտ Իպն Իպրահիմ Ալ-Ալա-
ուի (Ալիի ընտանիքէն), որ ծանօթ էր
Իպն Թալաթըպա անունով: Յետոյ երբ
վախճանեցաւ Մոհամմէտ Իպն Իպրահիմ,

Ապուս-Սարայիս տեղը կարգեց Մոհամ-
մէտ Իպն Զայտ ու Ալ-Ապպաս Իպն Մո-
համմէտ Իպն Մուսա Ալ-Ճաֆարի ու գը-
րաւեց Պասրան:

Զայտ Իպն Մուսա Իպն Ճաֆար Իպն
Մոհամմէտ եկաւ Քուֆայէն, ուր չէր ու-
ղած հնազանդիլ (Մամուն իշխանի):
Պասրա գնաց, Ալ-Ապպաս Իպն Մոհամմէտ
Ալ-Ճաֆարիի հետ. իսկ Մոհամմէտ Իպն
Էլ-Հասան՝ որ ծանօթ էր Աս-Սըլք անու-
նով, գրաւեց Ուսսըթ քաղաքը: Իպրահիմ
Իպն Մուսա Իպն Ճաֆար գրաւեց Եմէնը,
իսկ Մոհամմէտ Իպն Ճաֆար առաւ Հի-
ճաղը:

Մծբինի եւ չըջականերուն տիրեց [Ահ-

մէտ Իպն] Օմար Իպն Ալ-Խաթթապ Ար-
Բապիլի: Մուսուլի՝ Աս-Սայրտ Իպն Անս,
իսկ Նիքիլեքտի՝ Մուսա Իպն Ալ-Մուպա-
րաք Ալ-Եաշթարի:

Հայաստանի տիրեցին Ապտմէլիք Իպն
Ալ-Ճահաֆ Աս-Սուլամի ու Մոհամմէտ
Իպն Ադդապ. Ատրպատականի՝ Մոհամ-
մէտ Իպն Ար-Բաուսա: Ալ-Ադաուի եւ Եզիտ
Իպն Պալալ Ալ-Եամանի եւ Մոհամմէտ
Իպն Համիտ Ալ-Համաուանի եւ Օթման
Իպն Աֆթալ եւ Ալի Իպն Մըռ Աթ-Թա-
յի(36):

Եագուպի, Բ. 539-540

26.

Ալ-Մամուն եւ Հայեքը

Ալ-Մամուն (813-833) Հայաստանի ու
Ատրպատականի վրայ կառավարիչ կար-
գած էր Թահըր Իպն Մոհամմէտ Աս-Սան-
յանի: Ուրիշներ կը պատմեն թէ զինքը
ղրկողն էր Հարթհամա Իպն Այեան Համա-
տանցին՝ մինչ դէպի Իրաք կ'երթար: Թա-
հըր գնաց Ատրպատականի վարդանակերտ
քաղաքը. գրեց Հայաստանի զօրավարնե-
րուն ու անոնց երեւելի զինուորականնե-
րուն, եւ անոնք հպատակութեան երդում
ըրին Մամունի:

Ամինի կողմէն Հայաստանի կառավա-
րիչն էր՝ Իսհակ Իպն Սիւլէյման, որուն
հետ կային Օմար, Ալ-Հուզուն, Ներտեհ,
Ապտիլուհաման՝ Աղուաններու իշխանը եւ
չառ իշխաններ: Իսհակ ուղղուեցաւ դէպի
Պարտաւ՝ բնակիչներուն վրայ յարձակե-
լու համար, որովհետեւ իր որդին դուրս
հանած էին:

Թահըր անոր զրկեց Զահիր Իպն Սինան
Ալ-Դամիմի՝ մեծ բաղնիքեամբ: Իրարու
հանդիպեցան եւ ամբողջ օրը պատերազ-
մեցան: Յետոյ պարտուեցան Իսհակ Իպն
Սիւլէյման ու անոր ընկերները, իսկ անոր
որդին՝ Ճաֆար Իպն Իսհակ Իպն Սիւլէյ-
ման գերի բռնուեցաւ: Թահըր [զրկեց

(36) Վարդան, ԽԱ. էջ 77, 78:

դայն] եւ հետը գտնուող զերիները՝ Մա-
մունի: Բայց շատ օրեր չանցած՝ Թահըր
Աս-Սանյանիի վրայ արշաւեց՝ Ապտիլ
Մէլիք Իպն Ալ-Ճահաֆ Աս-Սուլամի, որ
ապստամբելով՝ Փայտաւարանի ժողո-
վուրդին հետ պաշարեց Թահըրը Պարտաւ
քաղաքին մէջ, ուր պաշարուած մնաց քա-
նի մը ամիս:

Ալ-Մամուն այս դոյժն առնելուն՝ Հա-
յաստանի կառավարիչ կարգեց Սիւլէյման
Իպն Ահմէտ Իպն Սիւլէյման Ալ-Հաշմը:
Երբ Հայաստան հասաւ, արդէն Թահըր
պաշարուած էր, զինքն ազատեց ու ար-
ձակեց, Ապտիլմէլիքի ապահովութիւն
չնորհեց ու երկիրը խաղաղեցաւ:

Յետոյ Հայաստանի կառավարիչ կար-
գեց Հաղըմ Իպն Հարթհամա Իպն Այեան,
որ երբ հասաւ՝ երկիրը ինկած էր բազ-
մաթիւ Մուղաղլ կոչուած Իսլամ աղան-
դաւորներու եւ մոլեռանդներու ձեռքը:
Զիրար կը սպաննէին, քիչ մնաց որ փճա-
նային, բայց յետոյ հաշտուեցան:

Հաղըմ Իպն Հարթհամա քիչ օրեր մի-
այն Հայաստան մնալէ վերջ, լսեց հօրը՝
Հարթհամայի մահուան գոյժը եւ թէ ի՞նչ
պարագաներու մէջ մեռած էր: Այն ատեն
մեկնեցաւ Պարտաւէն ու բնակեցաւ Քիսալ
կոչուած քաղաքը, ուր բերդ մը չիկնեց եւ
ամէն ջանք ըրաւ պաշտօնանկ ընելու
(Մամունը):

Թղթակցեցաւ Հայաստանի իշխաննե-
րուն, նախարարներուն, Պապէքի եւ Խու-
ռամցիներուն, անոնց առջեւ ստորնացնե-
լով Իսլամներուն (Խալիֆային) հեղինա-
կութիւնը: Պապէք ապստամբեցաւ Խու-
ռամցիներու հետ ու տիրեց Ատրպատական
դաւառին:

Երբ Ալ-Մամուն լսեց, Հայաստանի կա-
ռավարիչ կարգեց Եահիա Իպն Մայատ
Իպն Մասլըմ՝ Տհահլիցի ցեղախումբէն սե-
րած ազատագրուած ստրուկը [...]. որ
այդ բանն ըրաւ: Եահիա Իպն Մայատ
քանի մ'անգամ պատերազմեցաւ Պապէքի
դէմ, առանց եւ ոչ իսկ մէկ անգամ յաղ-
թելու: Ալ-Մամուն տեղուհ Եահիայի գոր-
ծունէութենէն՝ Հայաստանի ու Ատրպա-

տականի վրայ հրամանատար նշանակեց Իսա Իպն Մահմադ Իպն Ապի Սալլա, եւ հրամայեց անոր որ բանակը կազմակերպէ, իսկ ան ոտնիկ տայ իր ինչքերէն: Անոնք որ խաղաղութեան քաղաքէն (Պաղատէն) էին՝ Իսա պատրաստեց իր դրամով: Երբ Պաղատէն ելաւ, հոն մէկը չմնաց այն զինուորներէն որոնք կային (Ամինի եւ Մամունի) քաղաքացիական կըռնիւն ժամանակ: Եւ երբ Հայաստան հասաւ, իր քով եկաւ Մահմադ Իպն Ասուրաւ Իպն Ալ-Մուշի ու այդ երկիրներուն բոլոր մեծամեծները եւ զինուորները խմբեց Պապէքի դէմ կռուելու համար: Կեցաւ կիրճ մը, ուր հանդիպեցաւ Պապէքի եւ յաղթուեցաւ անկէ (Պապէքէ): Իսա ետ քաշուեցաւ, առանց տեղ մը կենալու: Այն ատեն բարձր զինուորականներէն ոմանք իրեն ըսին. — Դէպի ո՞ւր, ո՞վ Ապու Մուսա: — Պատասխանեց թէ մենք բախտ չունինք ասոնց դէմ կռուած ժամանակ, եւ կը վախճանք Իսլամներու դէմ կռուելէ:

Ատրպատականէն գնաց Հայաստան, ուր ապստամբած էր Սեւադայ Իպն Ապուիլ-Համիտ Ալ-Ճահաֆի: Իսա առաջարկեց Հայաստանի կառավարիչ նշանակել զինքը, Բայց Սեւադա մերժելով ուղեց դէմը պատերազմի: Այն ատեն Իսա պատերազմեցաւ անոր դէմ ու յաղթեց յետ ծանր յոյնութիւններու, եւ Հայաստան խաղաղեցաւ շնորհիւ Իսա Իպն Մահմադի:

Իսկ Պուտուի(37) մէջ Պապէքի խնդիրը մեծցաւ. այն ատեն Ալ-Մամուն կառավարիչ նշանակեց Ջարիկ Իպն Ալի Իպն Սատաք Ալ-Ադուի, բայց որեւէ գործ չըրաւ: Այն ատեն Ալ-Մամուն Հայաստանի վրայ կառավարիչ կարգեց Իպն Համիտ Աթ-Թուսի: Երբ Ջարիկ լսեց իր պաշտօնանկութեան լուրը, ապստամբեցաւ, իսկ Մահմադ Իպն Համիտ եկաւ Հայաստան, պատերազմեցաւ Ջարիկի դէմ, ու Մո-

համադ (Իպն Համիտ) սպաննեց անոր կուսակիցները: Յետոյ Ջարիկ ներում խնդրեց. Մահմադ շնորհեց անոր ու զինքը զրկեց Ալ-Մամունի քով:

Մահմադ Իպն Համիտ Հայաստան կեցաւ, մինչեւ որ երկիրը մաքրեց սարսափի մէջ պահող ապստամբներէն: Երբ կարելի եղաւ պատերազմիլ Պապէքի դէմ, զօրաւոր ըրաւ ու վրան խուժեց: Ճակատամարտը սաստիկ եղաւ, այնու հանգերձ յաղթանակեց: Յետոյ Իպն Համիտ գնաց կիրճ մը՝ ուր գետինը շատ կոշտ էր, եւ մեկնեցաւ իր խումբով: Պապէքի մարդիկը յարձակեցան անոնց վրայ ու Մահմադ Իպն Համիտ սպաննուեցաւ, ինքն ու իր բանակին երեւելիներէն խումբ մը ու բանակին մնացած մասը փախուստի մատնուեցաւ: Այն ատեն բանակին գլուխ կեցաւ Մահմադ Իպն Ասուրաւ՝ Իպն Համիտի ազգականը: Այդ բանը պատահեցաւ 214ին (829):

Երբ Մահմադ Իպն Ամին սպաննուեցաւ, Ալ-Մամուն՝ ճիշդաւ նահանգին, Հայաստանի ու Ատրպատականի կառավարիչ կարգեց Ապտալլա Իպն Թահար, եւ գրեց դատաւորներուն ու հարկահաւաքներուն որ անոր հնազանդին:

Ապտալլա մեկնեցաւ, բանակեցաւ Տինսուարի(38) մէջ ու գրեց Մահմադ Իպն Ասուրաւի ու Մահմադ Իպն Եուսուֆ Իպն Ապուիլ-Համիտ Իպն Համիտի զօրավարներուն, որոնք Մահմադ Իպն Համիտի հետ էին՝ որ իրենց տեղը մնան: Իսկ Սորասանի մէջ մեռաւ Թալհա Իպն Թահար: Այն ատեն Ալ-Մամուն տեղը կառավարիչ նշանակեց Ապտալլան եւ անոր զրկեց անուանումի պաշտօնական թուղթը՝ Իսահակ Իպն Իպրահիմի եւ դատաւորներու դատաւոր Եահիա Իպն Աբթահի հետ:

Ապտալլա՝ այդ տարին գնաց Խորասան. այն ատեն Ալ-Մամուն՝ Ատրպատականի ու Պապէքի դէմ պատերազմելու հրամանատարութիւնը յանձնեց Ալի Իպն Հիշամի, իսկ Հայաստանի վրայ կառավարիչ

րիչ կարգեց Ապուիլ-Ալայ Իպն Ահմադ Իպն Եզիա Իպն Ուսայտ Ասու-Սուլամի, որ երբ Հայաստան եկաւ՝ Մահմադ Իպն Իպրահիմի տիրացեր էր Վրաստանի եւ անոր միացած էին Ծանարները: Ապուիլ-Ալայ ո՞չ պատերազմելու յարմարութիւն ունէր եւ ոչ ալ զինուորիւն: Այն ատեն (Ալ-Մամուն) կառավարիչ կարգեց Սալլա Իպն Եզիա Իպն Մադիատ, որ հանեց իր ցեղախումբի մարդիկը Իրաքի բանտերէն ու եկաւ Միջագետք: Հոն իրեն միացան Բապիյայի ցեղախումբերէն մեծ բազմութիւն մը ու քալեց Հայաստանի վրայ: Երբ խաթ հասաւ, իրեն եկաւ Սեւադայ Իպն Ապուիլ Համիտ Ալ-Ճահաֆ(39) եւ ապահովութիւն շնորհեց անոր: Յետոյ գնաց Նախիջևան, ուր բռնացած էր Եզիա Իպն Հիւսն՝ Մուհամմադ ցեղախումբին ազատագրութեամբ ստրուկը: Եզիա Իպն Հիւսն իրմէ փախաւ եւ եկաւ Քասալ, եւ հոն մնաց:

Սալլա մարդ զրկեց Մահմադ Իպն Իպրահիմի ան եկաւ եւ ապահովութիւն խնդրելով՝ հնազանդութիւն ցուցուց: Սալլա անոր շնորհեց կեանքի ապահովութիւն եւ ըսաւ թէ Ծանարները քեզի հնազանդ են: — Ոչ, պատասխանեց Մահմադ մէտ, Ծանարները ինձի հնազանդ չեն: Սալլա խուժեց անոնց վրայ, յարձակուեց զորքեց Վրաստանի վրայ, պարտութեան մատնեց զանոնք, առաւ անոնց ոչխարները, յետոյ զանոնք հաշտութեան կանչեց: Հաշտութիւն կնքեց, պայմանով որ անոր տան երեք հազար ձի եւ քսան հազար ոչխար: Սակայն կարճ ժամանակամիջոցէ վերջ [.....] Քասիի ցեղը միացաւ անոնց, Սալլան ապստամբեցան ու վրան յարձակեցան: Ապստամբներուն մէջ (Քասիիներուն մէջ) կար նաեւ Ալի Իպն Եահիա Ալ-Արմանի (Ալի հայազգին): Սալլա գերի բռնեց զինքն ու խումբ մը եւ զանոնք զբոսեց Ալ-Մամունի: Մամուն զանոնք զրկեց Իպն Իսահակ Ալ-Մուհամմադի երկիրը, ա-

նոր իշխանութեան յանձնեց եւ ոտնիկ սահմանեց անոնց:

Յետոյ Ալ-Մամուն՝ Սալլաի տեղ Հայաստանի կառավարիչ կարգեց Ապտալլա Իպն Մասաւ Ալ-Ասուի, որ Սալլաի կանչել տուաւ. այն ատեն Սալլա վախեցաւ որ չըլլայ թէ դաւադրութիւն ըլլայ: Երբ հասաւ, զինքը յանձնեց անոր (Ալ-Մամուն Սալիֆայի) եղբոր՝ Ալ-Մուհամմադի:

Ապտալլա Իպն Մասաւ Ալ-Ասուի քիչ ատեն միայն կեցաւ Հայաստան ու մեռաւ: Անոր յաջորդեց որդին՝ Ալի. բայց երկիրը խռովեցաւ. այն ատեն Ալ-Մամուն կառավարիչ նշանակեց Ալ-Հասան Իպն Ալի Ալ-Պատաղիսի, որ ծանօթ էր Ալ-Մամունի անունով: Երբ Հայաստան եկաւ [.....] երկիրը խռովութեան մէջ էր, պատերազմեցաւ [.....] բերդի բնակիչներուն դէմ, զայն գրաւեց ու գնաց Դուլին եւ հոն բնակեցաւ:

Յետոյ գրեց Իսահակ Իպն Իսմայիլ Իպն Շուայպ Թիֆլիսցիի, որ տուրքերը իրեն զրկէ: Բայց որովհետեւ Իսահակ Իպն Իսմայիլ մերժեց ու պատուիրակները ետ դարձուց, ինքը անձամբ խուժեց Թիֆլիսի վրայ: Երբ մօտեցաւ, գնաց (Իսահակ) դէպի ան, տուրքերը վճարեց եւ իրմէ հեռացաւ(40):

Եադուլի, Բ. 563-567

27.

Պապէքի խռովումն ու Հայերը

Պապէք հետզհետէ զօրացաւ, եւ Մահմադ Իպն Ալ-Պուաթ՝ անոր կողմնակից եղած էր. իսկ Իսմէթ Քիւրտը՝ Մարանտի իշխանը անոր հնազանդութեան մէջ մտած էր: Այն ատեն Ալ-Մուհամմադ (833-842) զրկեց Թահար Իպն Իպրահիմի երկրին գործակալին Իսահակ Իպն Իպրահիմի եղբայրը՝ ու անոր հրամայեց պատերազմիլ Թահմարին դէմ: Երբ հասաւ երկիրը, նամակ գրեց Իպն Ալ-Պուաթ՝ Ալ-Մուհամմադ Սալիֆային, յայտնելով իր

(39) Վարդան զայն կը կոչէ Սեւադայ ի տանէ Զահապայ: Վարդան, ԽԲ. էջ 79:

(40) Վարդան, ԽԲ. էջ 79. Ասողիկ, Հանդէս Բ. գլուխ Բ. էջ 106:

(37) Պուտ՝ Ատրպատականի քաղաքներէն էր:

(38) Տինսուար կը գտնուի Պարսկաստանի մէջ:

հնազանդութիւնը եւ թէ ինքը հետամուտ է Պապէսն ու իր ընկերները ծուղակի բերելու: Յետոյ նենգութիւն ըրաւ Իսմէթ Քիւրտին՝ Մարանդի իշխանին: Ամուսնացաւ անոր աղջկան հետ, անոր քով գնաց մինչեւ Մարանդ, յետոյ զայն հրաւիրեց մինչեւ իր տունը: Խմցուց անոր եւ հետը եղողներուն, ու երբ գինովցան՝ գիշեր ատեն տարաւ զանոնք մինչեւ իր բերդը, որ Շահէ կը կոչուէր: Յետոյ զանոնք զրկեց Ալ-Մուդասըմի, որ զինքը վարձատրեց, զնահատեց եւ ոռճիկ սահմանեց [եւ պատմեց] Թահըր Իպն Իպրահիմի եղելութիւնը ու անկէ խնդրեց որ իրեն զրկէ երկաթն ու ջորինները: Թահըր զրկեց զանոնք եւ անոր նամակ գրեց անոնց մասին:

Ալ-Մուդասըմ բարկացաւ Իսհակի եւ ըսաւ. եղբոր վրայ չեմ տեսներ առնականութեան ոչ իսկ հետք մը, ինչ որ կը տեսնեմ Իպն Ալ-Պուաթի վրայ: Այն ատեն (Ալ-Մուդասըմ) զրկեց Ալ-Աֆշին Հայտար Իպն Քաուա Աշրուշնեցին ու զինքը հրամանատար կարգեց բոլոր զաւառներուն ուսկից որ անցաւ: Հետոյ առաւ ինչքեր ու զէնքի մթերներ եւ երբ Ալ-Աֆշին հասաւ Ճապալ (Էփր), առաւ հետը եղող ուսկիներն ու երեսելները եւ զնաց: Ճակատամարտներ տեղի ունեցան իրեն ու Պապէի միջեւ, եւ իր բանակը դրած էր տեղ մը՝ որ կը կոչուէր Պարզանտ: Յետոյ զնաց տեղ մը՝ որ կը կոչուէր Սատրասպ [Հաշտասար]: Հոն տարի մը կեցաւ ու պատերազմեցաւ, մինչեւ որ ձիւները չատցան, ու դարձաւ Պարզանտ, իսկ իր սիրտանորդը զրկեց զէպի Սատրասպ [Հաշտասար] եւ խուժեց ու ամէն զաւառ ըրաւ [...]: Յետոյ զնաց Եատ [Բոտ] Ար-Բոտ: Հոն խրամ փորեց, պատնէշ շինեց ու ծուղակ լարեց: Յետոյ խուժեց զէպի Պրոտ, հինգչաբթի օրը, Ռամատան ամսոյն 9, 222ին (837): Պապէս պատուիրակ զրկեց բանակցութիւն խնդրելու: Աֆշին ընդունեցաւ: Մէջերնին գետ մը կար. Աֆշին անոր առաջարկեց ապահովութիւն շնորհել: Պապէս խնդրեց մէկ օրուան ժամանակամիջոց, բայց Աֆշին պատաս-

խանեց՝ թէ կ'ուզես ամրացնել քաղաքը, եթէ ապահովութիւն կ'ուզես՝ անցիր դետը եւ եկուր:

Պատերազմը սաստկացաւ ու խաւամները մտան Պուտտ քաղաքը: Պապէս փախաւ իր ընկերներէն վեց հոգիի հետ, եւ Պուտտ քաղաքէն վեց հազար վեց հարիւր Իսլամ զերիններ աղատեցան, ու Պապէս հեծած ջորիի վրայ՝ բուրդէ զգեստով փախաւ:

Այն ատեն Ալ-Աֆշին գրեց Հայաստանի ու Ատրպատականի իշխաններուն որ զինքը հետապնդեն: Անոնց խոստացաւ թէ ո'վ որ զինքը բերէր, անոր պիտի տար մէկ միլիոն դահեկան ու երկրին տուրքերու շնորհում: Պապէս զնաց երկիր մը՝ որուն իշխանը կը կոչուէր Սահլ Սմբատեան (Իպն Սմբատ): Սահլ հիւրընկալեց զինքն ու զըրեց Աֆշինի: Աֆշին մարդ զրկեց զինքը ձերբակալելու ու նամակ գրեց՝ իմացնելով (Ալ-Մուդասըմի) թէ յաղթանակեր է վերջապէս, եւ թէ ինչ կարգադրութիւններ պիտի ընէր: - Յաղթանակին լուրը կարգացուեցաւ ու ամէն կողմ գրուեցաւ անոր մասին... մինչեւ որ երկիրը խաղաղեցուց: Յետոյ մեկնեցաւ ու իր տեղը փոխանորդ կարգեց Մանկաճուր Փարզանտը՝ իր մօրեղբորորդին ու զնաց Սամառ, Մուդասըմի քով: Ամէն կայարան հանդիսեցաւ զօրավարներուն ու մեծ մարդերուն եւ մտաւ քաղաքը՝ Սափար ամսոյն 2ին 223ին (838): Պապէս փրկ հեծած առջեւէն կ'անցնէր, մինչեւ որ ներկայացան Ալ-Մուդասըմի: Ան հրամայեց կտրել անոր ձեռքերն ու ոտքերը, յետոյ մեռցուց զայն ու խաչեց Սամառայի մէջ: Ղրկեց նաեւ անոր եղբայրը Ապտալլա՝ զէպի Պաղտատ, ուր զայն սպաննեց Իսհակ Իպն Իպրահիմ ու խաչեց զինքը կամուրջին գլուխը, Պաղտատի աջ կողմը⁽⁴¹⁾:

Եագուպի, Բ. 577-579

(41) Վարդան, ԽԲ. էջ 79. Պապէսը՝ Բար երբեմն ալ Բարան կը կոչէ: Ստ. Օրբէլեան ալ, տպ. Փարիզ, 1859, Ա. էջ 201-203, զայն Բարան կը կոչէ: Նաեւ կը պատմէ թէ Պապէս ամուսնացած էր Վասակ Սիւնիի աղջկան հետ, եւ Սիւնիքը իր

28.

Ալ-Մուդասըմ Խալիֆան

եւ Հայաստանի կառավարիչները

Ալ-Աֆշին երբ Ատրպատական վերադարձաւ, Հայաստանի վրայ կառավարիչ կարգած էր Մոհամմէտ Իպն Սիւլէյման Ալ-Ազտի, որ երբ Հայաստան հասաւ, արդէն Սահլ Սմբատեան Առանի մէջ ապրտամբած էր ու հոն բռնացած էր: Մոհամմէտ մտաւ անոր երկիրը, յարձակեցաւ վրան զիշեր ատեն ու յաղթեց անոր: Իսկ Վարդանակերտի մէջ յարձակեցաւ Մոհամմէտ Իպն Ապտալլա Վարդանակերտցին: Այն ատեն Ալ-Աֆշին զրկեց Մանկաճուրը՝ անոր գէմ պատերազմելու համար: Յետոյ անոր մասին բարեխօս եղաւ Ալի Իպն Եահիա Ալ-Արմանի եւ Ալ-Մուդասըմ ապահովութիւն շնորհեց անոր, երբ ներկայացաւ Ալի Իպն Եահիա Ալ-Արմանիի հետ:

Յետոյ Ալ-Աֆշին Հայաստանի կառավարիչ կարգեց Մոհամմէտ Իպն Խալիֆ Պուխարխուտահ, որ երբ հասաւ՝ պատերազմեցաւ Մանարներուն գէմ ու զնաց Թիֆլիս: Իսկ Իսհակ Իպն Իսմայիլ սիրով ընդունեցաւ զինքը եւ նուէրներ ըրաւ անոր: Յետոյ Հայաստանի կառավարիչ կարգեց Ալի Իպն Ալ-Հիւսէյն Իպն Սիպայ Ալ-Քայսի: Երկրին ժողովուրդը զինքը արհամարհեց, այնպէս որ տկարութեան պատճառաւ ու թուլութեան համար՝ ժողովուրդը որը կը կոչէր զինքը: Ալ-Մուդասըմ Հայաստանի եւ Տիար Բապիայի մէկ մասին կառավարիչ կարգեց Խալիֆ Իպն Եգիտ: Երբ անոր գալստեան լուրը հասաւ Հայաստան, բոլոր իշխանները ամրացան, անոնց վախը սաստկացաւ, եւ ամէն տեսակ պատրաստութիւն տեսան ապստամբելու համար: Հայաստանի թըղթատարութեան վերակացուն Մանսուր

ազդեցութեան տակ առած էր, ինչպէս նաեւ Բագասականայ. այս երկու գաւառները եւ Գեղարքունիքի գաւառները անհնազանդ ըլլալով Պապէի ջարդեր կատարեց:

Իպն Իսա Աս-Սապիլի՝ լուր տուաւ Մուդասըմի: Այն ատեն Մուդասըմ ետ կանչեց Խալիֆը եւ հրամայեց տեղը զնել Ալի Իպն Ալ-Հիւսէյն: Բայց հազիւ քանի մ'օր չանցած՝ Պարտաւի զինուորները ապստամբեցան անոր գէմ եւ իրենց ոռճիկները պահանջեցին: Իսկ ինքը պատասխանեց. ես քովս բան մը չունիմ, ինչ որ կայ՝ ժողովուրդինն է: Այն ատեն ինքը ժողովուրդէն պահանջեց, իսկ ժողովուրդը մերժեց տալ, ու բերդերուն մէջ ամրացան: Ինքը զնաց Նախիջեւան. իրեն եկաւ Եգիտ Իպն Հիւսէյն՝ ներում խնդրելու [...]: Այն ատեն սկսաւ մեղմ վարուիլ անոնց հետ, վախէն որ չըլլայ թէ ապստամբին:

Եագուպի, Բ. 579-580

29.

Ալ-Ուաթ-Էփի Խալիֆայուքիւնը

եւ Հայերը

Հայաստան ապստամբեցաւ, (Հայաստանի) արար բնակիչները, իշխանները, տիրապետողները (Արար ամիրանները, որոնք Խալիֆայէն կէս անկախութիւն ունէին), ճիպալի (Ատրպատականի բռններուն) ու ճորայ Պահակի արքայիկները տիրեցին իրենց սահմանակից երկիրներուն եւ թուլցաւ Խալիֆային հեղինակութիւնը:

Այն ատեն Ալ-Ուաթ-Էփ (842-847) կառավարիչ կարգեց Խալիֆ Իպն Եգիտ Իպն Մազիաուր եւ հրամայեց անոր որ մեկնի: Անոր իշխանութեան կեցեց Տիար Բապիայի (Միջագետքի մէջ) ինչ ինչ գաւառներ: Խալիֆ քաղեց մեծ ու զօրաւոր բանակով մը: Երկրին բռնացողներն անոր լուրն առնելուն պէս, ահաբեկ եղան, շատերը նամակ գրեցին թէ կը հնազանդին ու նուէրներ զրկեցին: Ինքը պատասխանեց թէ միայն անձամբ նուէր բերողները կ'ընդունի ու այսպէսով շատցուց աժդոհութիւնը:

Նամակ գրեց Իսհակ Իպն Իսմայիլի որ իրեն գայ, բայց ան մտիկ չըրաւ: Այն ատեն

Ալ-Մուդաուաֆիլի հալիֆան
և Հայերը

տեն վրան արչաւեց. քիչ մնաց որ Իսհակ ձեռքը յանձնուէր, [հիւանդացաւ] Խալլուտ ու մեռաւ: Զինքը դադարի մը մէջ դրին ու տարին Դուինի մէջ թաղեցին: Անոր ընկերները ցրուեցան, իսկ երկիրը անկարգ դրութեան մը մատնուեցաւ: Այն ատեն Ալ-Ուաթհը կառավարիչ կարգեց որդին՝ Մոհամմէտ Իպն Խալլուտ: Մոհամմէտ նամակ գրեց (Խալիֆային), յիշելով թէ իր հօրը ընկերները ցրուած են, եւ խնդրեց որ իրեն դառնան: Դրկեց Ահմէտ Իպն Պասթամ դէպի Մծրին, ուր դարկաւ, մարդիկը բանտեց եւ տունները այրեց: Մոհամմէտի շուրջ հաւաքուեցան հօրը բարեկամները, աղատագրուած զերինները, եւ պատերազմեցան Մանարներուն ու Իսհակ Իպն Իսմայիլի դէմ: Յաղթեց անոր ու երկրէն հալածեց զինքը: Անկէ վերջ բարեկարգ վիճակ ունեցաւ Հայաստան: Եագուպի, Բ. 587-588

Ալ-Մուդաուաֆիլի հալիֆան
և Հայաստան

(Ալ-Մուդաուաֆիլի 847-861) Ալ-Մուհն-դասըրի (իւր որդին) տուաւ Եգիպտոսը, Մադրէպը (Հիւսիսային Աֆրիկէ), եւ անոր զիւանադպիր կարգեց Ահմէտ Իպն Ալ-Խասիպ: Ապու Ապտալլա Ալ-Մուդաուաֆիլի (իւր որդին) յանձնեց Խորասանը, ճապարը (Պարսկաստանի լեռնային մասը), եւ անոր զիւանադպիր կարգեց Ահմէտ Իպն Իսմայիլ: Իսկ Իպրահիմ Ալ-Մուսայրուտի յանձնեց Ասորիքը, Հայաստան եւ Ատրպատական, անոր զիւանադպիր կարգելով Մոհամմէտ Իպն Ալի, որ ծանօթ էր [կը պակսի մակդիրը]: Միաժամանակ Ալ-Մուդաուաֆիլի հրամայեց որ ոչ-մահմադական հպատակներուն պաշտօն չտրուի Խալիֆայի պետութեան գործերուն մէջ, նոր չինուած եկեղեցիները կործանուին, նորերու չինութիւնը արգելուի, եւ այսպէս հրաման գրեց ու զրկեց աշխարհի բոլոր ծագերուն:

Եագուպի, Բ. 594-595

Հայաստան ապստամբեցաւ, բազմաթիւ իշխաններ եւ ուրիշներ ոտքի ելան ու բռնացան իրենց գաւառներուն վրայ: Այն ատեն Ալ-Մուդաուաֆիլի (Հայաստանի) կառավարիչ կարգեց Ապու Մայիտ Մոհամմէտ Իպն Եուսուֆը, որ քաղեց դէպի Հայաստան: Իր զոհարանները բերել տուաւ, զանոնք հաղաւ, եւ մինչ բերել կու տար իր մէկ հատ հողաթափը ու զայն ոտքը անցուց՝ ինկաւ մեռաւ առանց որեւէ հիւանդութեան: Ալ-Մուդաուաֆիլի կառավարիչ կարգեց անոր որդին՝ Եուսուֆ, որ մինչեւ Հայաստան եկաւ: Իշխաններուն նամակ գրեց. անոնցմէ ոմանք պատասխանեցին, իսկ Բագարատ՝ Աշոտի որդին (Բագարատ Բագրատունի՝ Աշոտ Բագրատունիի որդին) քովը դնաց ապահովութիւն խնդրելու համար: Զինքը ձերբակալեց ու զրկեց Մուդաուաֆիլի...: Անոր դէմ պատերազմեցաւ [...] ու սպաննեց զայն: Այն ժամանակ երկիրը ապստամբեցաւ:

Ալ-Մուդաուաֆիլի զրկեց Մեծն Բուղա, որ երբ Արդն հասաւ, իր քով եկաւ Մուսա Իպն Զուրարա՝ Բագդէի տիրապետող (Արաբ) ամիրան եւ իրմէ ապահովութիւն խնդրեց: Սակայն (Բուղա) զինքը կապանքներու մէջ դրած զրկեց Ալ-Մուդաուաֆիլի: Յետոյ դնաց տեղ մը որ Աղբակ կը կոչուէր: Հոն կար Աշոտ Իպն Համդա (Աշոտ Արծրունի), զայն պաշարեց, անոր ապահովութիւն խոստացաւ ու բռնեց զրկեց Մամառա (Իրաք): Հոն վերջը կտրուեցաւ Ժողովրդեան դրան վրայ ու խաչուեցաւ:

Յետոյ գրեց Իսհակ Իպն Իսմայիլի, Թիֆլիսի (Արաբ) ամիրային որ իրեն գայ: Անիկա պատասխանեց թէ երբեք անհնազանդ գտնուած չէ, եթէ զբաւ ուզէ՝ կու տայ անոր, եւ եթէ մարդ ուզէ՝ անոր կը զրկէ, իսկ անոր երթալը անկարելի է: Այն ատեն (Բուղա) վրան արչաւեց, յաղթեց

Ալի Իպն Եահիա Ալ-Արմանիի
սպանութիւնը

անոր, վիզը կտրեց ու գլուխը Խալիֆային զրկեց:

Ապա արչաւեց Մանարներուն վրայ, անոնց դէմ պատերազմեցաւ, անոնցմէ յաղթուեցաւ ու հետապնդուեցաւ: Այն ատեն ինք սկսաւ հալածել զանոնք՝ որոնց ապահովութիւն տուած էր, ու ձերբակալեց զանոնք: Շատեր փախան, գրեց Յունաց կայսեր, Խալաֆ ու Սլաւ իշխաններուն ու բաղմութիւն մը եղան: Այն ատեն գրեց Ալ-Մուդաուաֆիլի. ան երկրին վրայ կառավարիչ նշանակեց Մոհամմէտ Իպն Խալիֆ Եգիպտ Իպն Մադիստ Ալ-Շայպանի, որ երբ (Հայաստան) հասաւ՝ ապստամբները հանդարտեցան ու նորէն ապահովութիւն չնորհեց անոնց⁽⁴²⁾:

Եագուպի, Բ. 598-599

Ախմէտ Իպն Եահիա Ալ-Արմանի

Յոյներու կայսրը պատգամաւորներ ու նուէրներ զրկեց, որ քիչ էին. յետոյ զըրկեց կրկին: Այն ատեն (Խալիֆան) զրկեց Լանիֆ կոչուած պաշտօնեան, որ պալատականներուն գլուխ կը կենար: Զայն կարգեց զերիններու փրկանքի վերակացու: Եկաւ Տարսոն 241ին (855), երբ սահմանադրութիւն քաղաքներու կառավարիչն էր (Հայազգի) Ահմէտ Իպն Եահիա Ալ-Արմանի:

Ալ-Լամէս դնաց մինչեւ կամուրջ, կանչեց զերինները, յանձնեց յոյն զերինները եւ զնեց քրիստոնեայ ստրուկներ:

Եագուպի, Բ. 599-600

(42) Հայ պատմագիրները Ապու Մայիտը Ապու Սէթ կը կոչեն: Բողոքն ալ կը պատմեն Յուսուֆի անոր որդիին եւ Բուղայի անդթութիւնները: Շեփովելու չէ այս Յուսուֆը Մարտ թագաւորի ժամանակակից՝ Արշինի եղբոր Յուսուֆ Իպն Սահի հետ, որ Ատրպատականցի էր: Թովմա Արծրունի, Գլ. Ե. էջ 106-127. Յովհանն կաթողիկոս, Գլ. ԻԵ. էջ 148-166. Վարդան, ԽԲ. էջ 80-81:

(43) Ասողիկ, Հանդէս Բ. գլուխ Բ. էջ 110:

Մուգամբը խալիֆան Պարթապի վրայ
ալ կառավարիչ կարգեց Իսկանդարի
Իսկանդար, որ Ֆոսթաթ եկաւ Բապիւյ ա-
խար ամսուան մէջ 257ին (Մարտ 871) եւ
անկէ զնաց Պարթապ:

Մուգամբը շիւտէն վերակացուն, որ
ծանօթ էր Բրք էլ-Մուր (մահուան տակ)
մակդիրով, զրկեց Իսկանդարի խալիֆայ
որ տիրացած էր Պարթապին՝ անոր առա-
ջարկելով կեանքի, ինչքերուն եւ զաւակ-
ներուն ազատութիւն, եւ ներել մինչեւ
այն ատեն եղածին, ու զինքը կառավարիչ
կարգել Հայաստանի: Հրամանը կատար-
ուեցաւ, ելաւ երկրէն ճումամա ալ-ուխ-
րայի մէջ 257ին (Ապրիլ 871) ու յանձնեց
ինչ որ կար ձեռքը Ամաճուր թուրքին,
առանց առած դրամներէն եւ ոչ իսկ դա-
հեկան մը դարձնելու:

Եազուլի, Բ. 621

35.

Մոհամէտ Իսկանդարի Իսկանդար
Ալ-Արմանի

258ին (871) ամառնային արշաւանքը
կատարեց Մոհամէտ Իսկանդարի Իսկան-
դար Ալ-Արմանի (Հայազգի): Այն ատեն
վրան հասաւ Շանիֆ նախարարը՝ Մու-
գամբը խալիֆային ազատագրուած
զերին եւ ստորուկը, զերինները փրկելու
համար: Հաւաքուեցան Լամէս զետին քով,
զերինները ազատեցին եւ չորս ամսուան
զինադադար տուին Ֆոսթաթին: Այդ դէպ-
քը պատահեցաւ 258ին, Բամաստան ամ-
սուան մէջ (871):

Եազուլի, Բ. 624

Բնագրէն Թարգմանեց
Հ. Ա. ԱԴԱՄԵԱՆ

Վ. Ե. Բ. 2

ՄԻՏԻ ՄԱՂԻԿԸ

Ես ցանեցի քրտինքս աստղի պէս բոցուտ,
Եւ դուն ելար բուրեան հողին սուրբ ծոցէն.
— Ես եմ, ըսիր, սրտիդ ծաղիկն հողենիւթ,
Որուն փթթումն հայցեցիր դուն անկինքէն:

Երբ իրարու առջի անգամ նայեցանք,
Նոյնն էր երանդը թերթերուդ եւ սրտիս.
Կը բերէիր դուն ինձ գարնան ըստիւփանք,
Ես՝ կարմիր սէր, լարերուն հետ քննարկիս:

Պիտի խնդրեմ ես երկինքէն առատ ցօղ
Եւ հեշտութիւնն արեւներուն Մայիսի.
Ու սընարիդ քով ծնրադիր, աղօթող,

— Տէր, պիտի ըսեմ, տուր այս ծաղիկն ալ հողի,
Որ դըրախտին մէջն ոտքերուդ տակ խոնարհ,
Հրեշտակ մ'ըլլայ քեզ օրհնելու անդադար:

ՄԵՐ ԼԵՁՈՒՆ

Երբ կը շարեմ սրտերու շուրջ զերդ գոհար
Բառերը մեր, երանդ եւ բոյր միասին,
Կարծես շողերն արեգակին կ'ըլլան բառ,
Եւ կը հլուէ Մայիսը փունջ սիրային:

Ամէն մէկ վանկ անգ կը թռչի սոխակի,
Եւ ամէն տառ ոսկի մանեակ աղջկայ.
Շեշտն է լեզուակ պղնձակերտ զանգակի,
Որ կ'աղօթէ վանքերու պէս հընամեայ:

Ես կը սիրեմ վարդակարմիր ածականն,
Մօր կաթի պէս այնքան անոյշ եւ անմեղ.
Երբ քաղցրօրէն անոնք իրար մօտ կու գան,
Կարծես երկու համբոյր կ'ըլլան սրտազեղ:

Ես կը սիրեմ հոգեմոմոք կոչականն,
Կամար, կամար զանգիւններով հեռաւոր.
Բայերը մեր որ հովի պէս կը սուրան
Եւ կապոյտը ծափ կը դարնէ տարփաւոր:

Իմաստութեան մտքի ծնունդ գոյականն
Աստուածաշունչ մ'է վաղեմի օրերէն.
Աշխարհիս մէջ բարբառ չըկայ իր նրման,
Այնպէս խօսող սրտի խորէն, երկինքէն:

Թախիծը մեր, խունկի նրման աղօթիկեր,
Բառեր ունի միշտ քաղցրօրէն յուզելու.
Որքան սիրտեր կը բացխլուին անհամբեր,
Խօսք մ'հայկական ըսպեղանի գընելու:

Կը համակուին ժամերն անոր խորհուրդով
Երբ կը խօսի Աստուծոյ հետ դէմ առ դէմ.
Յորձանք կ'առնեն Շարականներն իրարմով
Եւ լոյս կ'իջնէ Զարթիքին հետ ժպտադէմ:

Ես կը սիրեմ ոսկետաւիղ մեր լեզուն
Շրթներուն մէջ սրբազնացած մայրերու,
Որ կ'օրօրէ ամէն Հայու մանկութիւնն,
Հաւատք կ'ըլլայ անկունութեամբ մեռնելու:

Ճիւղիս, 10 Հոկտ. 1946